ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/30

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.03.2018թ. թիվ 03/26-3/4185-18 գրությամբ «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 01.03.2018թ. թիվ 01/61-4606 գրության հիման վրա, 07.03.2018թ. թիվ 03/26-3/4185-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ն 20.03.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի միջև՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի /շարժական և անշարժ/ շուկայական գնահատման և հաշվետվության տրամադրման ծառայությունների մատուցման նպատակով կնքվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով պայմանագիր (առանց ֆինանսական միջոցների առկայության):

05.02.2018թ. Երևանի քաղաքապետարանը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին և հայտնել, որ «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի տնօրենը կամ լիազորված անձը (լիազորագրի և անձը հաստատող փաստաթղթի առկայությունը պարտադիր է) 15 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է Երևանի քաղաքապետարան (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1, 224/2 սենյակ)՝ ստորագրելու «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի՝ վճարման ժամանակացույցը հաստատող համաձայնագիրը:

Երևանի քաղաքապետարանը «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին ուղղված 28.02.2018թ. թիվ 61/328 գրությամբ հայտնել է հետևյալը. «..... Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի 18-րդ կետով, սույն թվականի փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով պատշաճ կերպով ծանուցել է Ընկերությանը՝ ստորագրված համաձայնագիրը Երևանի քաղաքապետարան ներկայացնելու առաջարկով, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված համաձայնագիրը...»:

Ընկերությունը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.03.2018թ. թիվ 01/61-4606 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պայմանագրի 7.13 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական

միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում է և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի 18-րդ կետով, սույն թվականի փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով պատշաճ կերպով ծանուցել է Ընկերությանը՝ ստորագրված համաձայնագիրը Երևանի քաղաքապետարան ներկայացնելու առաջարկով, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված համաձայանգիրը, ինչով խախտվել է Պայմանագրի 7.13 կետով սահմանված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները...»:

Ընկերությունը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանը 01.03.2018թ. լուծելով Երևանի քաղաքապետարանի և «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ միջև 16.11.2017թ. կնքված

«ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով պայմանագիրը այն հիմքով, որ Ընկերությունը իբրև թե չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, մասնավորապես.

Երևանի քաղաքապետարանը «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին ուղղված 28.02.2018թ. թիվ 61/328 գրությամբ և ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.03.2018թ. թիվ 01/61-4606 գրությամբ հայտնել է, որ ղեկավարվելով Կարգի 18-րդ կետով, 2018թ. փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով իբրև թե պատշաճ կերպով ծանուցել է Ընկերությանը՝ ստորագրված համաձայնագիրը Երևանի քաղաքապետարան ներկայացնելու առաջարկով, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված համաձայանգիրը:

Մինչդեռ, 05.02.2018թ. Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցումից երևում է, որ Երևանի քաղաքապետարանը ընդամենը առաջարկել է «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի տնօրենին կամ լիազորված անձին (լիազորագրի և անձը հաստատող փաստաթղթի առկայությունը պարտադիր է) 15 աշխատանքային օրա ընթացքում ներկայանալ Երևանի քաղաքապետարան (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1, 224/2 սենյակ)՝ ստորագրելու «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի՝ վճարման ժամանակացույցը հաստատող համաձայնագիրը:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված էլեկտրոնային նամակին կցված չի եղել համաձայնագրի նախագիծ, որը Ընկերությունը կարող էր ստորագրել և ներկայացնել Պատվիրատուին: Մինչդեռ Երևանի քաղաքապետարանի 28.02.2018թ. թիվ 61/328 և 01.03.2018թ. թիվ 01/61-4606 գրությունների բովանդակությունից ստացվում է, որ Ընկերությանը ուղարկվել է համաձայնագրի նախագիծը, սակայն Ընկերությունը Պատվիրատուին սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված համաձայանգիրը:

Ընկերությունը նշել է, որ «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի 18-րդ կետի համաձայն՝ .... համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում,

իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերությունը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը իր թվարկված գրություններում նույնպես վկայակոչել է Կարգի 18-րդ կետը՝ հայտնելով, որ ղեկավարվելով 18-րդ կետով, 2018թ. փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով իբրև թե պատշաճ կերպով ծանուցել է Ընկերությանը, մինչդեռ, Պատվիրատուն Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկելիս՝ թույլ է տվել նշված կետի խախտում, քանզի «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին չի ներկայացվել կնքվելիք համաձայնագրի նախագիծը, ինչպես դա պահանջում է Կարգի վկայակոչված կետը:

Ընկերությունը հայտնել է, որ նման պայմաններում «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ն զրկված էր նշված համաձայնագիրը կնքելու և այն պատվիրատուին ներկայացնելու հնարավորությունից՝ համաձայնագրի նախագիծը չունենալու պատճառով:

Ընկերությունը հայտնել է, որ «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի կողմից բազմիցս փորձ է արվել պարզելու, թե երբ է ներկայացվելու նաև համաձայնագրի նախագիծը, կամ գոնե երբ կարող է ներկայանալ Երևանի քաղաքապետարան՝ համաձայնագիրը կնքելու, սակայն այդպես էլ պատասխան չի ստացվել:

Ընկերությունը նշել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերությունը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Երևանի քաղաքապետարանը միակողմանի լուծելով 16.11.2017թ.-ին «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով պայմանագիրը՝ գործել է ոչ իրավաչափ, քանի որ Երևանի

քաղաքապետարանի կողմից թույլ է տրվել «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետի խախտում:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին խնդրել է հաշվի առնել նշված փաստարկները, «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված խախտումը և ընկերությանը չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/30 ընթացակարգի շրջանակներում հրավիրված 15.03.2018թ. ժամը 11:45-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով միջնորդել է ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին հետաձգելու նիստը, քանի որ Ընկերությունը «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի շահերը ներկայացնելու նպատակով ներգրավվել է իրավաբանական Ընկերության և իրավաբանները կարիք ունեն ծանոթանալու գործի նյութերին և ներկայացնելու մասնագիտական դիրքորոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձը բավարարել է Ընկերության միջնորդությունը:

«Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/30 ընթացակարգի շրջանակներում հրավիրված 22.03.2018թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 20.03.2018թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 01.03.2018թ. թիվ 01/61-4606 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի միջև 16.11.2017թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով գնման պայմանագրի 7.13 կետի համաձայն՝

«Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում է և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի 18-րդ կետով, սույն թվականի փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով պատշաճ կերպով ծանուցել է Ընկերությանը՝ ստորագրված համաձայնագիրը Երևանի քաղաքապետարան ներկայացնելու առաջարկով, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված համաձայանգիրը, ինչով խախտվել է Պայմանագրի 7.13 կետով սահմանված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/30 ընթացակարգի շրջանակներում 15.03.2018թ. ժամը 11:45-ին և 22.03.2018թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/30 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/30 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի միջև 16.11.2017թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի /շարժական և անշարժ/ շուկայական գնահատման և հաշվետվության տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

3. Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

4. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

5. Պայմանագրի 7-րդ կետի 7.13 ենթակետը սահմանում է, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե

այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում է և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի 01.03.2018թ. թիվ 01/61-4606 գրությունը և կից փաստաթղթերը, «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի 20.03.2018թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի

համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա ***պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում*** ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ***ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով:*** Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը պատվիրատուին

ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Երևանի քաղաքապետարանի և «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի միջև 16.11.2017թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի /շարժական և անշարժ/ շուկայական գնահատման և հաշվետվության տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 7-րդ կետի 7.13 ենթակետը սահմանում է, որ ***Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով***: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, ***Կատարողը համաձայնագիրը կնքում է և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

05.02.2018թ. Երևանի քաղաքապետարանը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին և հայտնել, որ «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի տնօրենը կամ լիազորված անձը (լիազորագրի և անձը հաստատող փաստաթղթի առկայությունը պարտադիր է) 15 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է

Երևանի քաղաքապետարան (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1, 224/2 սենյակ)՝ ստորագրելու «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի՝ վճարման ժամանակացույցը հաստատող համաձայնագիրը:

Երևանի քաղաքապետարանը 28.02.2018թ. «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին ուղղված թիվ 61/328 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի միջև 16.11.2017թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով պայմանագրի 7.13 կետով սահմանված է եղել, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում է և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Կարգի 18-րդ կետով և Պայմանագրի 7.13 կետով, սույն թվականի փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով պատշաճ կերպով ծանուցել է Ընկերությանը՝ ստորագրված համաձայնագիրը Երևանի քաղաքապետարան ներկայացնելու առաջարկով, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված համաձայնագիրը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և Պայմանագրի 7.13 կետով, որոշում է ընդունել միակողմանիորեն լուծել Պայմանագիրը:

«Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ն 20.03.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը 2018թ. փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը, սակայն էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկելիս՝ թույլ է տվել Կարգի 18-րդ կետի խախտում, քանի որ «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին չի ներկայացրել կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

Այսպիսով, Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ***ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և <u>կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում</u> գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:***

Այսպիսով, արձանագրում եմ, որ Երևանի քաղաքապետարանի կողմից խախտվել է Կարգի 18-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ Պատվիրատուն պարտավոր էր նշված կետով սահմանված պահանջի համաձայն Ընկերությանը ուղարկել կնքվելիք համաձայնագրի նախագիծը գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, մինչդեռ Պատվիրատուն 05.02.2018թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին ներկայանալու Երևանի քաղաքապետարան ստորագրելու «ԵՔ-ԳՀՇՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի՝ վճարման ժամանակացույցը հաստատող համաձայնագիրը:

Նման պայմաններում գտնում եմ, որ Պատվիրատուն, սահմանված կարգով չուղարկելով կնքվելիք համաձայնագրի նախագիծը, փաստացի զրկել է «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին Պայմանագրով նախատեսված պարտականությունների հետագա կատարման հնարավորությունից, ուստի նման փաստական հանգամանքներում գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.03.2018թ. թիվ 03/26-3/4185-18 գրությամբ «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02632026) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ